մեաց մի աւերեսցի տուն և բնակութիւն և շէն հասարակ ժողովրդոց, բայց յայնմանէ որ հարկաւոր լինիցի դաշտեցուցանել շուրջ ամրոցի բերթօրէից առ 'ի ապահովութեանց, և որ ոք ամրոց թշնամեաց պատերազմաւ ստացեալ, եթէ հարկաւոր լինիցի մեզ աւերել և քակել վասն աջողութեան պատերազմի մերոյ պարիսպն և բուրջն ամրոցաց և բերթօրէից և տուն վառօղի և ջաբախանայի, և բնակութիւն զինուորաց միայն աւերեսցի։

ԳԼՈՒԽ ՅՂ.

Ամենայն գաւառք, յագարակք, գեօղ, այգեստանք, անտառք, մորենի և ամենայն ազգ անասունք, թռչունք և ամենայն կահ և կարասիք դրացեաց մերոյ և որոց Օտարականաց որ իցէ 'ի ժամանակի թշնամանալոյ ընդ մեզ և պատերազմի մատնելով նոցա ներպահպանութեան մերոյ համարեսցի իբր սեպհական ժառանգութիւն մեր, և նմանեսցի հնազանդողաց մերոց և հաստուցանողաց սովորական հարկ, մաքս, հաս և բաժին առ մեզ պահպանութիւն մեր 'ի վերայ նոցա մի և նոյն լինիցի որպէս 'ի վերայ սեպհական յազգին մերոյ բնակացելոյ 'ի Հայաստան։

ԳԼՈՒԽ ՅՂԱ.

Որ ոք գաւառք, քաղաք և գեօղք և բնու-